ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-432[8]-18.11.2022,05.12.2022-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՆՁԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» 2021 թվականի մայիսի 5-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «6) հաստատում է անձի ֆունկցիոնալության գնահատման գործընթացում ներգրավված մասնագետների վերապատրաստման կարգն ու պայմանները.»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեյալ բովանդակությամբ նոր՝ 6.1-ին կետով ՝

«6.1) հաստատում է գնահատող մասնագետների ռեեստրի ստեղծման եւ սպասարկման կարգը.»:

Հոդված 3. Օրենքի 7-րդ հոդվածի՝

1) 1-ին մասից հանել «անձ (երեխա)» բեռերը, իսկ «անձը» բառից հետո լրացնել «(երեխան)» բառը.

2) 5-րդ մասի 2-րդ կետում «անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում իրավասու պետական մարմնի» բառերը փոխարինել «Միասնական սոցիալական ծառայության (այսուհետ՝ անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում իրավասու պետական մարմին)» բառերով:

Հոդված 4. Օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասն առաջին նախադասությունից հետո լրացնել հետեյալ բովանդակությամբ նոր նախադասությունով. «Գնահատող հանձնաժողովների համար վերադաս մարմին է հանդիսանում անձի ֆունկցիոնալության գնահատման ոլորտում իրավասու պետական մարմինը:»:

Հոդված 5. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասում «որոնք գործում են մինչեւ 2023 թվականի փետրվարի 1-ը» բառերը փոխարինել «որոնք գործում են մինչեւ 2023 թվականի դեկտեմբերի 31-ը եւ տարածվում են բժշկասոցիալական վերափորձաքննության իրականացման նկատմամբ ծագած հարաբերությունների վրա» բառերով:

Հոդված 6. Օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասում «մինչեւ» բառից հետո լրացնել «հաջորդ բժշկասոցիալական փորձաքննության իրականացումը կամ» բառերը:

Հոդված 7. Օրենքի 14-րդ հոդվածը լրացնել հետեյալ բովանդակությամբ նոր՝ 4-րդ մասով՝

«4. 2023 թվականի փետրվարի 1-ից սույն օրենքի դրույթները տարածվում են առաջին անգամ հաշմանդամության գնահատման նկատմամբ ծագած հարաբերությունների վրա, իսկ մինչեւ 2023

թվականի դեկտեմբերի 31-ը՝ նաեւ բժշկասոցիալական վերափորձաքննության իրականացման նկատմամբ ծագած հարաբերությունների վրա։»։

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի փետրվարի 1-ից բացառությամբ սույն օրենքի 1-ին եւ 2-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

Հոդված 9. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում։